

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբլի.  
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».  
Կամ Tiflis, Rédaction «Mschak».  
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

# ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի եւ աօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են  
խրաքանիւր բառին 2 կոպեկ.  
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երբ պէտք է գործէք.—նեմֆին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի կորուստ էլ. նամակ Ախալքալաքից. նամակ Խմբագրութեան. ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Առաջնորդական ընտրութիւն. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ազատ ժամեր:

## ԵՐԲ ՊԵՏԻ ԳՈՐԾԷՔ

Երբէք մեր երկրի գիւղացին այնքան պատահաներ չէր տեսել զանազան միջատներէն, բոյսերի եւ կենդանիների հիւանդութիւններից, ինչպէս վերջին տարիները: Նրա խաղողի վազերը փնայում են ֆիֆոկերայից, մկրիւկից, օղիւկից, բլեկոտից եւ ուրիշ հիւանդութիւններից, մրգատու ծառերը փշանում են թրթուռներից, նրա արտերը աւերվում են մորեխից, հոտենուտեան մուկից, հացի բզէզից եւ ժանգից, բամբակը, աւուրը եւ բոլոր բոյսերը զանազան սունկներից եւ որդերից, տնային կենդանիները ժանտախտից եւ այլ ցաւերից: Աւելացրէք դրանց վրա կարկուտի, սաստիկ ցրտերի, երաշտների եւ փոթորիկների հասցրած ֆնայանքը եւ ձեր առաջ կը պարզվի մեր տնուր իրականութեան սարսափելի պատկերը:

Առաջվայ ժամանակներում ձախորդ տարիները բացառութիւն էին կազմում եւ նրանց կորստաբեր ազդեցութիւն չէին ունենում, որովհետեւ գիւղատնտեսը հին պաշարներ ունէր, որոնցով նա թուլացնում էր անբերրութիւնից եւ ձախորդութիւններից առաջացած զրկանքները: Իսկ այժմ, դժբաղդաբար, բերրի եւ անփնաս տարիներն են կազմում բացառութիւն եւ այլ եւ չը կան պաշարներ, որոնք կարողանային մեղմացնել թշուառութիւնը եւ շուտով վերակազմել քայքայված տնտեսութիւնը:

Այժմ, երբ հողի տարածութիւնը այլ եւս բաւականութիւն չէ տալիս աճող աղքատագիւղական կարիքներին, երբ նա թուլացրել է իր արդիւնաբերող ոյժը, նա շատ շուտով էլ զոհ է դառնում ամեն տեսակ աննպաստ ազդեցութիւնների: Եւ օրից օր աւելանում է գիւղատնտեսի թշնամիների թիւը այնպէս արագ կերպով, որ եթէ մեր գիւղատնտեսը անկարող լինի զինվել նրանց դէմ, պէտք է ստիպված

լինի ձեռք բաշել իր արհեստից եւ դիմել բանւորի աշխատանքին քաղաքներում, գործարաններում եւ մեծ ձանապարհներում:

Զինել գիւղացուն այնպիսի միջոցներով, որ նա կարողանայ աջող կռիւ մղել իր տնտեսութեան թշնամիների դէմ—ահա մի մեծ գործ, որ դրված է մեր հասարակութեան, մեր կրթված երիտասարդութեան առաջ: Պարտնէր, մեր ժողովրդական մասսան, մեր գիւղական աշխատաւորը ամեն տարի աւելի ու աւելի ծանր դրութեան մէջ է ընկնում: Երբ պէտք է դուք ձեր սրտին մօտ առնէք նրա ցաւերը ու կարիքները եւ նրան օգնելու գործը կազմակերպէք հաստատ հիմքերի վրա: Երբ:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՄԻ ԿՈՐՈՒՍՏ Է՛Լ

Վերին-Ագուլիսում այս մօտ օրերս մեռաւ Յովհաննէս Խօջամիրեանը, որի վաղաժամ, ցաւալի մահը մեծ կսկիծ պատճառեց ոչ միայն իր ծնողներին, բարեկամներին ու բնակիչներին, այլ եւ իր հայրենակիցներին:

Այդ անունը այնքան էլ անծանօթներից չէ: Դեռ շատ ժամանակ չէ անցել այն օրից, երբ մենք կարդացինք նրա մի քանի յօդուածները «Մշակ»-ում եւ օրովհետեւ այդ անձնաւորութիւնը ձեռք բանօթ է միմիայն իր թղթակցութիւններով, ուստի իմ պարտքս եմ համարում մի փոքր ակնարկ գցել նրա կեանքի եւ գործունէութեան վրա:

Յովհաննէս Խօջամիրեանը ծնվել է Վերին-Ագուլիսում 1877 թվին: Աւարտելով Ներսիսեան դպրոցը, անմիջապէս ուղևորվեց Գերսիստ բարձրագոյն կրթութիւն ստանալու, բայց, դժբաղդաբար, հիւանդութեան պատճառով մի տարուց յետոյ վերադարձաւ իր ծննդավայր Ագուլիսը, ուր ապրեց եւ անցկացրեց իր կեանքի վերջին օրերը:

Հանգուցեալը հէնց աշակերտ ժամանակից զբաււլ էր իր վրա հասարակութեան մի մասի ուշադրութիւնը իր հեղ ու ազնիւ բնաւորութեամբ, անկեղծ եւ անհաստէր վարվեցողութեամբ. նրա անխնայ աշխատանքը, անզուսպ եռանդը եւ ուժեղ կամքը շատ-շատերին յայտնի է:

Վերջին ժամանակներ ապրելով Ագուլիսում, անձնուէր կերպով մասնակցում էր հասարակա-

կան գործերին՝ ոգևորված առաջադէմ գաղափարներով եւ ազգին ծառայելու տենչանքով:

Նրա քննչը, զգայուն սիրտը չէր համբերում, երբ տեսնում էր խեղճ, թշուառ, ողորմելի անձանց գերի-ստրուկ դարձած կաշառակերների, վաշխառուների ձեռքում. նա այդպիսի դէպքերում միանգամայն իրան մոռանում էր եւ, լըցված արդար զայրութիւն, կրակի շանթեր էր ուղղում այս կամ այն վաշխառուի, այս կամ բռնակալի դէմ: Այդպիսով նա ունէր թէ բարեկամներ եւ թէ թշնամիներ, սակայն չը նախելով թշնամիների լարած թակարդներին, միշտ, շարունակ անվախ, աներկիւղ առաջ էր գնում՝ իր համոզմունքին, իր գաղափարներին հաւատարիմ մնալով:

Մահը վերջ դրեց այդ կեանքին, որ կարող էր շատ օգտակար լինել մեր խեղճ, աղքատ հասարակութեան...

Վ. Ս.

## ՆԱՄԱԿ ԱԽԱՎՔԱՐԹԻՑ

### Մայիսի 21-ին

Մի նոր «եղիպտական պատիժ» էլ տաւարի ժանտախտն է եղել մեր գլխին: Անցեալ աշնան այդ հիւանդութիւնը Բեռնսօ գիւղում մեծ աւերածութիւններ արեց. ձմեռս էլ, ասում են, վաշխառուներ է ծածուկ կոտորածներ արել, եւ գիւղացիները դիմամբ չեն յայտնել իշխանութեանը: Ինչպէս յայտնի է, հիմա էլ քաղաքում եւ Ալաստան գիւղում տաւարի ժանտախտ կայ. իսկ նորադուր գոթաղութիւնն այն է, որ Մերենիա գիւղում էլ տաւարի հիւանդութիւն է երեւացել, որից մի քանիսը սատկել են: Անասնաբույժ Գրիգորի գնացել է, բայց դեռ տեղեկութիւն չը կայ. հաւանական է, որ նոյնպէս ժանտախտ լինի...

Հիւանդութիւնը քաղաքում եւ Ալաստան գիւղում շարունակվում է, թէեւ առանձին խիստ արտայայտութիւններ չունի: Ուղարկված են երկու անասնաբույժ ուսանողներ, մէկն էլ պիտի գայ: Մինչեւ երէկ Ալաստանում մորթված էր 157 գլուխ, իսկ քաղաքում գնդակահար էին արել 33 գլուխ: Այն քաղաքացիները, որոնց կովերը ջրկում են սպանելու համար, անազին աղմուկ են բարձրացնում, տրտունջ են յայտնում, նոյն իսկ վերաւորական իսուքըր են ուղղում քաղաքային վարչութեան անդամներին, որ իրանց, իրենք թէ առողջ, կովերը խրում եւ սպանել են տալիս: Այս հանգամանքը ցոյց է տալիս, որ մեր քաղաքացիները շատ հեռու չեն գնացել ռամիկ գիւղացիներից, որոնց վրա իրանք այնքան բարձրից են նայում: Խոր-

հուրդ ենք տալիս հաշտվել տնուր իրողութեան հետ, որովհետեւ ինչ անում են, իրանց օգտին են անում:

Այս դժբաղդութեան պատճառով քաղաքացիներից ոմանք ասում են, թէ հիմա են հասկանում գիւղացու ցաւը, մտնում նրա դրութիւնը: Այս էլ մի բան է... Երէկ կովատէրերի ժողով էր նշանակված: Անասնաբույժի առաջարկութեամբ առանձին տեղեր որոշեցին թէ արդէն հիւանդացած անասունների համար եւ թէ առողջների համար: Որոշված է հիւանդներին առանձնացնել Թափարվան գետի ձորում, հէնց գետի ափին: (Ջրի միջոցով չեն վարակվի արդեօք այն գիւղերը, որոնք գտնվում են ներքեւ եւ օգտվում են այդ գետի ջրով): Իսկ առողջները պէտք է պահվեն քաղաքի ծայրի մի պարսպապատ միջ, որտեղ եւ պիտի կլթեն կամ անասնաբույժը պիտի հետազօտէ: Ուրեմն մի առ ժամանակ քաղաքը տաւար չը պիտի մտնէ:—Բացի դրանից՝ քաղաքի չորջր վեց կէտերում չարագուշակ սեւ դրօշակներ են դրված եւ պահապաններ են նշանակված, որ տաւար չը բերեն հիւղերից քաղաք եւ հի էլ վերջինից՝ գիւղերը: Այս հանգամանքը մեծ դժուարութեան մէջ է գցել թէ քաղաքի եւ թէ գիւղերի ազգաբնակիչները: Քաղաքում միս չէ ճարվում. փոքր քանակութեամբ օշխար են մորթում եւ թանգ գնով ծախում. առհասարակ եզան սայլերով բերովով մթերքներ չեն ճարվում եւ խիստ թանգութիւն է ընկել: Գիւղացիները նոյնպէս շատ են փնասվում: Ինչ կը լինի ժողովրդի դրութիւնը, եթէ այս հանգամանքը երկար շարունակվի...

Սալլիւմեան

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

### Թիֆլիս, մայիսի 26-ին

«Մշակ» № 111-ի մէջ պ. Շիրինեան, խօսելով հայոց թատրոնի մասին եւ պատարակելով որ մի քանի սիրողներ եւ դերասաններ իրանց օգտին ներկայացումներ են տալիս, ի միջի այլոց պատիւ է անում եւ իմ անունս յիշել, ասելով որ, իրենք թէ ես՝ Տէր-Դաւիթեանս էլ մտադիր եմ մի ներկայացում տալ (եւ ի հարկէ իմ օգտին):

Կարծում եմ, որ պ. Շիրինեանը սխալվել է եւ երկու ազգանունները իրարից չէ զանազանել:

Ուստի, պարտքս եմ համարում հանգստացնել պ. Շիրինեանին, որ ես, Տէր-Դաւիթեանս, թէպէտ եւ մտադիր էի մի ներկայացում տալ, բայց տեսնելով, որ առանց ինձ էլ ներկայացումն տուողների թիւը շատ է եւ մասնաւոր լսելով, որ յօդուածագիր պ. Շիրինեանն էլ

Օրհնվածներ. ութ տարին մի ժամանակամիջոց է, երբ, մեր օրերում, անհնարին չէր լինի չորս օտար լեզու սովորել:

Եւ այդ ութ երկար տարիների ընթացքում հայ տղան չը կարողացաւ իր մայրենի գրականական լեզուն այնչափ խրաքանել, որ կարողացածը հասկանար ու հասկանալի ձեւով մեզ՝ չլիացողներին՝ հասկացնել:

Պատճառ:

Տուէք այդ հարցը լեզուների կոճղ Գիւլզադեանին եւ նման ուսուցիչներին եւ նրանք, ինչպէս յանցանքի տեղը բռնվածներ, կը պատասխանեն ձեզ:

—«Որովհետեւ ստորին եւ միջին դասարաններում լաւ չեն անցել հայոց լեզուն, ուստի եւ այդ առարկան վերջին VI-րդ դասարանում փոքր ինչ թոյլ է»:

«Les absents et les morts ont toujours tort», ասում է ֆրանսիացին:

Մեր լեզուով նշանակում է՝ «Բացակայ եղողները եւ մեռելները միշտ մեղաւոր են»:

Բացակայները եւ մեռելները մեղաւոր են, շատ բարի, հասկացանք:

Հապա դուք, ներկայ եղողներ եւ կենդանիներ, դուք ինչ չինեցիք, դուք ինչ սովորեցրիք այդ արդէն հասակ առած եւ ութ տարի ձեզ ապաւինած երիտասարդներին:

Ուսուցիչը հանում է կարգացած կտորից մի

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### Ա. Զ. Ա. Տ. Ժ. Ա. Մ. Ե. Ր.

Անգարա տեղաբնակներին

Ատելով ասում եմ ես աշակերտական ջրնուութիւններ կոչված հանդէսները:

Եւ ում կամ ինչի համար են նրանք:

Ո՛չ ոքի եւ ո՛չ մի բանի համար, ի հարկէ:

Այդ պատճառով էլ՝ կը գայ անշուշտ մի ժամանակ—եւ այդ ժամանակը շատ հեռու չէ մեզանից—երբ նրանք կը վերացվեն իսպառ:

Խօսենք մեր ազգային հօգեւոր սեմինարիայի մասին:

Մի դպրոցում, որտեղ կայ թեմակալ առաջնորդ եւ տեսուչ, կան տասնեակ մանկավարժ—ուսուցիչներ եւ հոգաբարձուներ, մի դպրոցում, որի դռները ամեն օր եւ ամեն ժամ բաց են հասարակութեան առաջ, սարքել տարեկան քննութիւններ աշակերտների գիտութեան չափը, նրանց առաջադիմութիւնը եւ հակառակը իմանալու համար, իմ կարծիքով, աննպատակ եւ, աւելին կասեմ, շատ անմիտ բան է:

Ութ երկար ամիսներ, գիշեր-ցերեկ անընդհատ, ծանր, կեանք մաշող մտաւոր աշխա-

տանքից յետոյ աշակերտին 30—35 օր էլ ենթարկել քննութեան, եւ այդ տարվայ մի այնպիսի ժամանակ, երբ ամբողջ բնութիւնը ուրախ է եւ զուարթ, ուրիշ ոչինչ է, եթէ ոչ ինկվիզիցիա:

Կատարեալ ինկվիզիցիայի բնաւորութիւն կրող այդ հանդէսները այժմս տեղի են ունենում Շուշու թեմական դպրոցում:

Եւ իմ ատելութիւնը, իմ վրդովմունքը օր օրի վրա աճում, աւելանում է՝ տեսնելով մանկավարժ կոչված մարդկանց անբարեխղճութիւնը, նրանց բարբարոսական անգիտութիւնները եւ, մանաւանդ, աշակերտ կոչված խեղճ եւ անպաշտպան արարածների տանջանքն ու չարաբանքը:

Են ամառից էի սպասել մինչեւ քննութիւնների վերջը եւ մի ընդհանուր տեղեկութիւն տալ ձեզ նրանց արդիւնքի եւ հետեւանքի մասին:

Բայց երէկվայ իմ աչքերով տեսած եւ իմ ակամջներով լսած արտաքին կարգի խայտառակութիւնները ծանր եւ ճշող տպաւորութեան տակ,—ինչպէս ֆրանսիացին ասում է,—«սպիտակ գիշեր» անցկացնելուց յետոյ՝ ես այլ եւս անկարող եմ համբերել:

Ուստի խնդրում եմ թող տալ ինձ նկարագրել—եթէ միայն հնարաւոր է նկարագրել—այն տխուր եւ մի եւ նոյն ժամանակ ծիծաղաշարժ պատկերը, որ թեմական դպրոցը ե-

րէկ դրեց՝ մասնաւոր ինտելիգենտ կանանցից եւ օրիորդներից բաղկացած հասարակութեան առաջ:

Ձը տալ աշակերտին ութ ամսվայ, աւելի ճիշդ ասած՝ ութ տարվայ ընթացքում ոչինչ եւ մի օրվայ մէջ հրապարակապէս պահանջել նրանից ամեն ինչ՝ դրանից աւելի անբարեխղճութիւն ես չը գիտեմ...

Հայոց լեզուն լսել մի եւ նոյն էր թէ լսել միաժամանակ եւ տրագիկալ եւ կոմիկալ:

Աշակերտը կարողում է Մ. Խորենացու պատմութիւնից, թարգմանում եւ քերականական վերլուծութիւններ անում:

Ութ տարի հայոց թեմական դպրոցում հայ լեզու սովորած եւ բոլոր առարկաները հայ լեզուով անցած հայ աշակերտը՝ գլուխ առնելով ուսուցչութեան եւ մասնաւոր մանկավարժութեան հետ ոչ մի առնչութիւն չունեցող եւ հայոց բաները լատինական եւ պարսկական բաներով մեկնաբանող արդէն դառանալ Գիւլզադեանին՝ այնպիսի մի ողբալի դրութեան հասցրին այդ խեղճ հայոց լեզուն, որ եթէ Խորենացին որ եւ է հրաշքով յարութիւն առնէր, կը վերցնէր գրիչը եւ իր ողբերի տակ կաւեւանէր «ողբամ զքեզ հայոց անտէր ու անպաշտպան լեզու»:

Կը գրէր անշուշտ, հաւատացնում եմ ձեզ, եւ նորէն կը մանէր գերեզման՝ հանգստացած:

Ութ տարի...

մտադիր է ներկայացում տալ էժանագին թատրոնի օգտին՝ ես իմ մտադրութիւնս մինչեւ աշուն յետաձգեցի:

Իսկ գալով պարոնի գրասեն, թէ դերասանները ներկայացման ժամանակները ձեռքէ ձեռք են վաճառում, յարակցում է, որ մէկը այդ դերասաններին արդէն խնդրել է իր աշակերտութիւնը տոմսակներ վաճառելու գործում: Ես կարծում եմ, որ թէ յօգուածագրի առհասարակ բարեմտութիւնը եւ թէ պարզ քաղաքավարութիւնը պարզապէս զնոււմ, որ նա գրէր թէ ով է այն պարոնը, որ իրան խնդրել է տոմսակ վաճառել: Ինչ կը վերաբերի ինձ, Տէր-Դաւթեանին, ես արդէն այնքան յայտնի եմ հասարակութեան, որ կարծեմ կարիք չը պիտի ունենամ ուրիշներին դիմելու:

Դերասան Տէր-Դաւթեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Թիֆլիսի քաղաքային դուման իր վերջին նիստում, մանրամասն քննութեան ենթարկելով Ս. Մազադանիէի ապստարան հիմնելու առաջարկը, եկաւ այն եզրակացութեան, որ նպատակաւորաբար է այդ գործը թողնել մասնաւոր նախաձեռնութեան, իսկ քաղաքը իր կողմից կարող է օժանդակութիւն տալ իր ներկայի միջոցներով:

Մեր ընթերցողներին յայտնի է, որ կաթնատնտեսութեան մասնագէտ Աւետիս Գալանթար պաշտօնական յանձնարարութեամբ գնացել էր Լոնդոն պաշտպանելու ուստի կաթնատնտեսութեան չափերը Այդ գործի մասին «ВЕСТНИКЪ С. ХОЗЯЙСТВА» եւ «Торговопром. Газета» թերթերը հաղորդում են հետեւեալ մանրամասնութիւնները: Ներկայ 1901 թ.ի փետրվարին Լոնդոնի մաքսատան պաշտօնականները, քննելով Ռուսաստանից եկած կարագ իւղը, կասկածելի յայտարարեցին 11 տակոնի իւղ, եմքաղբիւղով այդ իւղը մէջ կեղծած ներթեր: Գործը յանձնվեց դատարանի, որի նիստը կայացաւ ապրիլի վերջը: Մեղադրող հաստատութեան կողմից նշանակված էր պետական քիմիկոս Լեվին, որը պնդում էր, թէ իւղը կեղծած է, որովհետեւ նա պարզեցնելով է աւելի քիչ քիմիական իւղաթթւութիւնը, քան անհրաժեշտ է եւ խոշորացոյցի տակ ցոյց է տուել ինչ որ բերեղների ներկայութիւնը: Պաշտպանող կողմից խօսեցին Մալ-Մորան, Ա. Գալանթար, դոկտոր Օտտո Հէյնրի եւ Ռիչմոնդ, բացի այդ դանիական մասնագէտ Ալլէն: Նրանք միմեան հերքում էին բացառութեանը, որ Լոնդոնի քիմիկոսների ընդունած չափը անճշդ է: Ինչ վերաբերում է բերեղներին՝ Գալանթար բացատրեց, որ դա իւղ պատրաստելու եղանակի արդիւնքն է, այն է, որ արաժանք տալիս են եւ յանկարծ ստացնում: Դատարանը դո՛ւմնակ բացատրութիւններ չէր տալու, որովհետեւ մեղադրանքը մերժեց, թողնելով առանց հետեւանքի: Դատաստանական այս գործը մեծ հետաքրքրութիւն էր չարժեք առեւտրական աշխարհում: Դատաստանական դահլիճը լի էր իւղավաճառութեամբ պարագլուղ առեւտրական տներին ներկայացողներով: Դատարանի որոշումը մեծ զոհանքով առաջ բերեց ներկայ եղողներին:

պարբերութիւն կամ նախադասութիւն եւ զբնուում կարմիր մանուշակով ծածկած սեղանի վրայ: Եւ ըստում են՝ մի քանի քաղաքացիներ, միւս ծայրից զննելով աշակերտը եւ այնքան ծանուցած, որ յոգնում են մահու չափի: Երբ ոչինչ չէ դուրս գալիս, այդ թշուառ նախադասութեան բառերը մինը միւսից անշատելով սկսում են այժմ էլ մանր-մանր լուծել:

Վերջապէս երկար չարչարելուց եւ տանջվելուց յետո՛ւ դուրս են բերում եւ հանդիսականներին առաջ դնում: Գլխաւորապէս յատկացուցիչ, «հանգամանական մակրայ», երթալ բալից ստացվում է հրամայական եղանակ երթալի, մի երթուր, եւ դերանունը դառնում է օժանդակ բայ, որի ապառնին՝ եւրիսեմ, եւրիսեմ, ծնանիլ խոնարհվում է ապառնի ժամանակում ծնեցից, ծնեցեմ, իսկ ստորագրականը՝ ծնայցեմ, ծնայցեմ: այնուհետեւ՝ բոլոր բառերը միմեան կամ առանձին առանձին վերջաւորած՝ ձայնարկութիւն կամ խալտառակութիւն:

Անկարող մնելով աչքերս փակել չը տեսնելու համար, եւ ոչ ականջներս խցել չը լսելու համար այն ամենը, ինչ որ կատարվում էր իմ առաջ, եւ զօրով զսպեցի ինձ, վերցրի սեղանից աշակերտի վերջնական շարադրութիւնը եւ սկսեցի թերթիկն աչք ստուար տեսարանը:

Կարգավոր եւ մի բան հասկանալու ժամանակ չը կար. միայն, անցողակի ձեւով այս ու

մէջ: Այդ որոշումը պարզեց, որ անգլիական քիմիկոսների զործարարող հետազոտական միջոցները հնացել են եւ որ նրանք կարող են դուր տեղը վնաս պատճառել առեւտրականներին:

Ներկայգործութեան եւ պետական կառուածների միմեանութիւնը, ցանկանալով նպաստել գիտնործութեան զարգացմանը, վճար է բանալ մի քանի գիտնործական դպրոցներ կոչվաւ: Գիտնործութեան առաջին դպրոցը «НОВОСТИ» լրագրի խոսքով, վճարված է բանալ հիւսիսային Կովկասի չրջաններից մէկում:

«Аргументы» լրագրին Պետերբուրգից հեռագրում են, որ ջրերի տեսուչը Կովկասում ներկայացրեց Մուղանի դաշտը ոռոգելու առանձին նախագիծ: Այդ նախագիծը կը քննվի Կովկասի ջրերի տեսուչ Պետրովի մասնակցութեամբ, որին երկրագործութեան միմեանութիւնը է Պետերբուրգ:

Նոյն լրագրին Պետերբուրգից հեռագրում են, որ Կովկասում բարձր մասնագիտական դպրոց հիմնելու առաջարկութիւնը ներկայացվելու է Պետական Խորհրդին աշխարհ: Մտադրութիւն կայ այդ դպրոցին ինչ հիմնել եւ գիւղատնտեսական բաժանմունք:

«Русск. Вѣд.» լրագրի Պերմի թղթակիցը հաղորդում է, որ Պերմի նահանգի զէնտովօի բժիշկների VII-դ համաժողովում բժիշկ Մէլզէր-Վսկի կարգաց իր գիւղացու միջնակարգ դպրոցի բէֆօրմի մասին, յայտնելով, ի միջի ալլոց, հետեւեալ ցանկութիւնները: Բժիշկ Մէլզէր-Վսկի ասեց, թէ ցանկալի է 1) որ համալսարաններին բժիշկական ֆակուլտէտի դոները բաց լինեն իշտական դպրոցների ընթացաւարտներին համար: 2) որ միջնակարգ դպրոցում ընդարձակվի նոր լեզուների դաստաւութեան ծաւալը, այժմեան դաստաւութեան սխտեմը չէ համապատասխանում ժամանակի պահանջներին: Բժիշկները, օրինակ, յաճախ ստիպված են լինում իրանց կատարելագործութեան համար արտասահման գնալ, որովհետեւ Մոսկվայում բժիշկների համար գոյութիւն ունեցող կուրսեր իրանց նպատակին չեն ծառայում: Այդպիսի բժիշկների համար նոր լեզուները անհրաժեշտ են, եւ հէյց դրանց մէջ թող են նրանք: Այդ հանգամանքը շատ դժուարացնում է բժիշկներին ցանկալի նպատակին հասնելու արտասահման կլինիկաներում եւ լաբորատորիաներում: Ապա զեկուցանողը մատնացոյց արեց այն անընական պայմանների վրա, որոնց մէջ գտնվում են դպրոցական բժիշկները: Վերջինները չեն մասնակցում դպրոցական խորհուրդներին:

Խարկովից «Россиа» լրագրին հեռագրում են, որ վճարված է սեպտեմբերի 10-ին հանդիսաւոր նիստ կայացնել Խարկովում ի պատիւ Վերկովի նրա ծննդեան օրվայ 80 ամեակի առթիւ: Հռչակաւոր գիտնականի ծննդեան

այն էջերին նայելով՝ եւ նկատեցի, որ վաղը հայոց լեզուից 4 եւ 5 թուանշան կրող վկայականով դպրոցը թողնող աշակերտի այդ շարադրութիւնը լի է տառախալութեամբ: Օրինակի համար՝ բառը առոս, յան տուկն, ասաւա տակութիւն, հաւ էր ժ, եւ այլն:

Ես ինքս, ճշմարտեմ առած, չառ էլ խառապահանջ չեմ ոչ մի լեզուի ուղղագրութեան նկատմամբ: Արդէն հասել է այն ժամանակը, երբ պէտք է մաքրել լեզուները աւելորդ եւ բեռնաւոր տառերից, երբ պէտք է վերջապէս, լեզուի ուղղագրութիւն կոչված բաժինը զտել եւ ենթարկել նպատակաւոր բէֆօրմների:

Բայց եւ այնպէս՝ ամեն ոք իրաւունք ունի պահանջել ուսուցչից, որ նրա VI-դ դասարանի աշակերտները չը լցնեն մանաւանդ իրանց ըննական շարադրութիւնը այդօրինակ՝ իսկ եւ իսկ ճշմարտեմ առած, տառախալութեամբ, այն աշակերտները, որոնք գրականական առաւօտներին բեմ են դուրս գալիս եւ իրանց ճառախօսութիւններով չլացնում պարզամիտ ժողովուրդին:

Ընդհանուր պատմութեան ժամանակ երեւան եկաւ աշակերտների գիտութեան վերին աստիճանի սահմանափակ եւ նեղ շրջակայեացը: Դատաբանից դուրս ոչ մի անգիտութիւն, խոշոր նշանակութիւն ունեցող անցքեր եւ բառեր ոչ մի բացատրութիւն Տարեթիւներ անցնելու ծանր եւ աւելորդ բեռն է համարված:

որվայ տնայնաւորութեանը կը մասնակցեն զանազան գիտնական ընկերութիւններ:

Կիւիլի համալսարանի վարչութեան որոշումը, դատախօսութիւններ լսելու վճարը չը մոյնեկու համար արձակված են 83 ուսանողներ: Բայց ուսանողներից արձակված են եւ 11 ազատ ընկնողները նոյն պատճառով:

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Կարսի նահանգավարի եւ ռադիկալական իշխան Խորխեուիճէի նորերի քաղաքը բարենորոգվում են բարեկարգվում է: Մօտ անցկալում աւերակ ներկայացնող տեղերում այժմ ճաշակաւոր այգիներ են կանգնած, փողոցները աւելի կանոնաւորվում են, մաքրութեան առանձին ուղղորդութիւն է դարձվում: Բայց շատ յարմար կը լինէր, որ փողոցները աւելի աւելի կանոն եւ ոչ առաւօտեան ժամը 8—9, երբ արդէն բոլոր խանութները բաց են եւ անց ու դարձ անդները ստիպված են փողոցներում բարձրացած փոշիները կուլ ապուր: Ետտ կարեւոր է, որ փողոցները զոնէ օրական երկու անգամ ջրվէին, որի համար մեծ ծախս չէ հարկաւոր: Ընտելութիւնը բաշխել է կարգին մի գետ, որը քաղաքի միջով է անցնում եւ կարող է մեծ գիւղութիւններ տալ: Նոյն իսկ այդ ծախսը կարելի է մոյնել այն 4000 ռուբլուց աւելի դուռարի մէջ, որը նշանակված է միայն փողոցները աւելելու համար: Բայց վնչ այն աւելուիւն:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Թօփիսանս կոչված հրապարակ վերափոխել են չոր ու ցամաք լեռները: Սրան շրջապատող մայրերի վրա, վաղ առաւօտից մինչեւ ուշ երեկոյ, վերտում են դարադաղի հայ մշակներ՝ փալաններով բեռնաւորված: Սկսելով մէջտեղը տեղի են ունենում լուրջ կոիւներ եւ կատակի նման տուր ու դմբոցներ՝ յոգնած մարտիկների վրայով: Խանութներին առաջ ընկած մայրերը կարծես կապալով են տրված բախկաններին եւ զբաղված են թարմ մրգիկներով, կանաչեղէնով եւ զանազան մթերքներով: Համբարատար քաղաքացիների համար ազատ անցուղարձ անցել միանգամայն անհնարին է:

ԲԱՌՈՒՄԻՑ մեզ գրում են. «Բաղուրի գերասանական խմբի մի մասը, ղեկավարութեամբ պ. Յ. Արեւելանի, մայիսի սկզբներից մի քանի ներկայացուցիչներ տուեց այստեղ: Խաղաղութիւնը ընտանիք», «Թագի համար», «Տրիբլի» եւ երէկ, մայիսի 26-ին, «Բարեկամներ»: Դա հրաժեշտի ներկայացումն էր, որ տուրին երէկ, Խուրը շուտով պէտք է հեռանայ մեզանից, թողնելով մեր ինտելիգենցիայի փոքրաթիւ մասի մէջ լաւ յիշողութիւններ: Վերջին ներկայացումը, ինչպէս եւ միւսները, շատ ավողանցան, մանաւանդ մեր թատերասէրները ոչ մի ջանք չէին խնայել թէ իրանց դերերը լաւ տուրելու եւ թէ պ. Արեւելանի հրաժեշտը չքեղ կերպով ամենաւել: Ներկայացման վերջը գերասանականները, մեր բոլոր թատերասէրների եւ տեղական ինտելիգենցիայի հետ խմբված, բեմի վրա շրջապատեցին յարգելի դերասանին եւ

եղել թէ ուսուցչի եւ թէ աշակերտների կողմից: Լսելով աշակերտի չոր ու ցամաք պատմութեամբ, դուր խորապէս համոզվում էք այն բանի մէջ, որ նրանց չեն պատրաստել ոչ աւելի բարձր ուսումը շարունակելու եւ ոչ իսկ կենսաբի համար, այլ որ նրանք առաջին կամ երկրորդ դասարանի աշակերտներ են, որոնք թուրքալի պէս անգիր ասում են այս վրա՝ այն օտանաւորը՝ առանց նրա բովանդակութիւնը իւրացրած լինելու:

Ես աւելորդ եմ համարում նկարագրել միւս առարկաների քննութիւնները: Բայց կարող եմ ասել, որ բոլոր առարկաներն էլ այս դրութեան մէջ են: Դեռ աւելի վատ... Ներկայ քննութեան ժամանակ աշակերտը, VI դաստանի աշակերտը այնպիսի անհեթեթութիւններ ասալ, որ դահլիճի մէջ բոլոր պէս տիրեց լուրջութիւն, սարսափ աղող մի լրտութիւն...

Հանդիսականներից երկու հոգի անկարող լինելով զսպել իրանց վրդովմունքը, զայրոյթը եւ քանաւանդ ծիծաղը, դուրս են գնում դահլիճից:

Մի քանիսը գերմարդկային ոյժ բանեցնելով եւ իրանց հանդարտ պահել չը կարողանալով՝ զանց են առնում քաղաքավարութեան կանոնն ու սահմանը եւ վերթանում: Դահլիճը, որ մինչ այն նստած էր սգաւտան, փոխվում է զուարճութեան տեղի: Բարձ-

թարմ ծաղիկներով ու փնջերով պսակեցին նրան:

ԱԶԱՅԻՇԷՆ գիւղից (Գեօկչայի գաւառ) մեզ գրում են. «Երէկ, մայիսի 19-ին, մեր հարեւան Ղալազա գիւղում պատահեց մի հաղուաղէպ անցք, որը խօսակցութեան առարկայ է դարձել բոլորի համար: Դէպքը հետեւեալն է. մի կին օրօրոց է կապում իր մանուկին եւ գնում է աղբիւրը ջրի: Վերադառնալուց տեսնում է, որ խողբից մէկը կերել է մանուկի երեսն ու ականջները»:

ԿՈՒՍԱՊԱՍ գիւղից (Ջիվանշիրի գաւառ) մեզ գրում են. «Ձը նայելով, որ գիւղում նոր քահանայի կարիք չը կայ եւ եղած չորս քահանաներն էլ ողորմելի են նիւթականի կողմից, բայց եւ այնպէս պատահեց, որ քահանայանք, ժողովրդից էլ աղէտ ու քահանայանք պահանջվելով ամենատարական գիտելիքներէր, զոքի տիրացուները, քահանայ ձեռնարկելու նպատակով, կարողացել են ինչ ինչ միջոցներով կողբել մեր հասարակութիւնից երկու համախօսական Համախօսականները արդէն ներկայացրված են Եւլուր կոնսիստորիին եւ ընդունված: Յոյս ունենք, որ թեմական առաջնորդը, ի նկատի ունենալով մեր քահանաների առանց այն էլ ողորմելի դրութիւնը, կը մերժէ այդ տիրացուների խնդրիքը, միանգամայն համոզված լինելով, որ տգէտ հասարակութիւնը մեծ մասամբ տիրացուի պատրաստած ճոխ սեղանի աղեղնութեան տակ է կազմում նոյնանման համախօսականները: Եւ ինչեւ տիրացուները, մեծուս առանալով, անուշա կը շարունակեն վարել իրանց նախկին պաշտօնները—Բ. Իր «մապանչիչիկ» պաշտօնը Բալայանի նախահանգներում, եւ Գ. իր «օրեղգչիկութիւնը» հարեւան գիւղում, իսկ քահանայ ձեռնադրվելու իրաւունքը կը թողնեն արժանաւորներին, որոնց կարիքը ամեն տեղ է զգացվում»:

ԿԵՐՁԻՑ մեզ գրում են. «Այս տարի կերչի հայոց ուսումնարանում քննութիւնները ցոյց տուին, որ աշակերտները վարժարանում բան են սովորում: Ժողովուրդը շատ զոհ է, որ կապիտան Միսնա Խիթարեան առանձին ուղարկութիւն է դարձնում ուսումնարանի վրա եւ աշխատում է, որ նա կանոնաւոր եւ վայելուչ վիճակի մէջ լինի: Ինքը շաբաթ օրերը աշակերտներին մարմնամարզութեան է վարժեցնում, որից զուրկ են շատ ուսումնարաններ: Դասընթացը աւարտեցին 4 հոգի: Պ. Խիթարեան աշխատում է նաեւ եկեղեցապատական շինութիւնների արմատական վերանորոգութեան համար: Մենք միանգամայն հաւատացած ենք, որ պարոն իր գիտաւորութիւնները մօտիկ ապագայում կիրառորդէ, իսկ ժողովուրդն էլ պարտաւոր է թէ նիւթապէս եւ թէ բարոյական խրախուսել պարոնի եռանդը, մանաւանդ պ. պ. Կուչարեան եւ Սէլինեան հրահարաւորութիւն ունեն նիւթապէս օգնել պ. Խիթարեանին, ինչպէս որ մինչեւ այսօր օգնել են ուսումնարանի պահպանութեան եւ եկեղեցու նորոգութեան գործերում»:

բանում է ընդհանուր քրքիշ: Քրքում են հանդիսականները, քրքում են ուսուցիչներն ու ընթերցականները: Սրանց օրինակին հետեւում են եւ մինչեւ անգամ քրքնող ուսուցիչն ու քննվող աշակերտները:

Վերջապէս առարկաներից թուանշան տալու նպատակով միայն կարելի էր յանձնարարել աշակերտներին մի մի բան սովորել անգիր եւ պարզեցնել դուրս գալ հրապարակ հանդիսականների առաջ:

Կը ստացվէր մի արտաքուստ շատ գեղեցիկ բան, ինչպէս այդ լինում էր այս տարվայ գրական առաւօտներին:

Դուրս կը գար—И ВОЛЖИ СЫТЫ И ОВЦЫ КЪЛЫ.

Վերջում մի խորհուրդ: Պատուիրեցէք մի մեծ աւելեւ նրանով արեւցէք ու մաքրեցէք զպրոցը աղէտ ուսուցչիներից եւ անվործ մանկավարժներից:

Այդպիսով միայն կարելի կը լինէր դոնէ առաջիկայ ուսումնական տարվայ սկզբից ազատել 600-ի չափ հայ տղաներ աւելորդ ժամակաւորութիւնից ու տանջանքից, իսկ ձեռք խալտառակութիւնից...

Այդպիսով միայն կարելի կը լինէր տարեկան 20,000 ռ. աղբի փողերը ջուրը չը թափել, այլ գործարար յօգուտ ձեռք յանձնված հայ մատող սերնդի կրթութեան գործին:

Սերմայան



Электропечатня Грузинск. Т—ва, Большая-Ванская ул., № 72.